

18032

325.3(42)  
\$ -75



15 JAN 2010  
27 SEP 2006

325.3(42)

4-75

սե

ՐՈԼԵ ՖՈԿՈ

ԱՆԳԼԻԿԱՅԻ  
ԳԱՂԱԽԹԱՅԵՒՆ  
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

34192

06 SEP 2013

18032

ԱՆԴԻՍԿԱՆ ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ  
ՔԱՅԼԵՐԸ

Անդլիական կղզու գիրքն ու առևտրական կապիտալի վաղ ամբացումը պայմանավորել են նրա գաղութային քաղաքականության հզոր զարգացումը։ Անդլիայում ճորտատիրական իրավունքն ավելի չուտ վերացվեց, քան յերրուպական մյուս յերկրներում (16-րդ դարի սկզբում) և այնտեղ ավելի վաղ ել զարգացավ բրդի արտահանման առևտուը դեպի Յեվրոպայի հյուսիսային յերկրները և ահա թե ինչու անդլիացիներն առաջին գաղութները Հիմնեցին Ֆլանդրիայում։ Դրանք Պատեկալեցի առևտրական քաղաքներն ելին (Դուքրի նեղուցում), վորոնք ապահովում ելին անդլիական նավերի առաջնությունը նեղուցում և հնարավորությունն ելին տալիս անդլիացիներին առանց խոչընդուների զբաղվելու ապահովների իմպորտով և եքսպորտով։ 14-րդ դարի վերջում կազմակերպվեցին առևտրական կապիտալի առաջին կոմիտեները։ Նրանք սերտ կազմված ելին անդլիական թագավորական տան հետ և վայելում ելին ամբողջ կառավարության լիակատար հովանալորտությունը։

Առևտրական կապիտալի համարակիչ դործունեցության վաղ զարգացման հետ միաժամանակ ծայր առան և զաման պատերազմները։ Անդլիայի և Ֆրանսիայի միջև ամբողջ 14-րդ դարի ընթացքում տեսող հարյուրամյա պատերազմի, ինչպես և դեպի Իսպանիա և Փորթուգալիա կազմակերպած արշավանքների հետեւանքն այն յեղափ, վոր յերկու թշնամի կողմերը պատերազմից դուրս յեկան միանդամայն թուլացած և ուժաւագառ յեղած։

Պետհամի տպարան  
Գյավինտ 6993 (բ)  
Հրատար. № 1945  
Պատվիր № 6405  
Տիրած 4000

Խուս. քարգմ. Ս. Ա. ԲԵՎԵԱՑ

Խմբ [REDACTED]

Ամերիկայի դյուտը խսպանական և գործուղարքական ծովաղնացների կողմից և նոր յերկրամասի գանձերի շահագործումը՝ անդիմական կապիտալի ուղին նշեցին :

Անդիմական այդ ժամանակ քաղաքացիական արյունահեղ կոփեների և յեկեղեցական հողերի բոնադրագման հետևանքով՝ հաստատվել եր առևտրական կապիտալի տիրապետությունը : Առևտրական ընկերությունները վայելելով իրենց պետության հովանավորությունը, սկսեցին ծովահենային պատերազմ՝ մղել խսպանական առևտրի գեմ և ավաղակային հարձակումներ գործել խսպանական դադութների վրա : Այդ պատերազմների ժամանակ թշնամի կողմերը կոտրում եին միմյանց ամենադաժան կերպով, իսկ ամենից չառ տուժողը հանդիմանում եր Ամերիկայի բնիկ ստրկացված բնակչությունը, վորին թե անդիմացիները և թե խսպանացիները դադանարար շահագործում եին, սոհայելով աշխատել մինչ ուժապառություն : Վերջ ի վերջո յերկու յերկների միջև մղվող պայքարը վերածվեց խսկակոն պատերազմի և Անդիման ունենալով ավելի զարգացած տեխնիկա՝ հաղթահարեց խսպանակային : Շուտով դրանից հետո Հյուսիսային Ամերիկայի և Աֆրիկայի արեմայան ափերում հիմնվեցին առաջին զադութները՝ առևտրական պոստերը :

16-րդ դարի վերջում և 17-րդ դարի սկզբներում ուժեղ կերպով սկսեց զարգանալ առևտրի մինոր «ճյուղ», վորը հակայական շահ եր բերում, դա ու ստրուկների առևտուրն եր, վորը կատարվում եր Աֆրիկայի և Արևմտյան Հնդկաստանի (Վեստ-Ինդիայի)<sup>1)</sup> միջև : Ներք է, ի ամբողջ յեղեր ու ի ելին վերդիում և վաճառքում եյին Ամերիկայում, Արևմտյան Հնդկաստանում՝

1) Արևմտյան Հնդկաստան կամ Վեստ-Ինդիա՝ դա ընդհանուր անունն եղաւ յուսիսային և Հարավային Ամերիկաների միջև ընկած մեծ ու փոքր Անտիլյան և Բահամյան, ինչպես և Կուբա, Հայտի և Յամայկա կղզիների :

չտքարի և ծխախոտի պլանտացիաներում աշխատելու համար : Անդիման մեկ դարից ավելի պայքարեց հրակատությունների առևտրի ասպարիցում մենաշնորհ ձեռք բերելու համար : Այդ ամբողջ ժամանակաշրջանում ուղամական ընդհարումներն իրապանիայի և Հունանդիմացի հետ չելին դադարում : Հաջող ուղամական հարձակումների հետեանքով՝ Անդիման 1713 թ. խսպանակայից խլեց և իր ձեռքում կենտրոնացրեց խսպանական դադութներին ստրուկներ վաճառելու մենաշնորհը : Անդիմացի մի քանի խոչը և հարուստ քաղաքների բարդավաճումը (Քրիստոլ, Լիվերպուլ) հետեւ վանք եր ստրուկների առևտրի : Ստրուկների առևտուրը շարունակվում եր տեղի ունենալ մինչև 19-րդ դարի առաջին քառորդը, այսինքն՝ մինչ այն ժամանակի, յերբ արդյունաբերական կապիտալի զարգացման հետեւ վանքով, ստրուկների աշխատանքոր դարձավ նվազ յեկամտարեր և Աֆրիկայից ստրուկներ բերելը վոչ շահավետ : Բացի դրանից նշանակություն ուներ և Հարավային Ամերիկայի խսպանական կալվածքների քայլաւումը, ուր այդ ժամանակ ծագեցին աղքային-հեղափոխական շարժումներ :

Կապիտալի նախնական կուտակման մեծագույն մասը, վորի չորսիլ հնարավոր զարձակ արդյունաբերական հապիտալիզմի զարգացումը, դոյցել եր ստրուկների առևտրի հսկա անուն, ահեռ : Բերելու ռափի բնթաղում՝ 16-րդ դարի վերջից մինչև 19-րդ սկիզբը, անդիմական բուրժուազիան անթիվ պատերազմների գնով, վորոնք մղվում եյին ստրուկների առևտրի ասպարիզում, Անդիմացի մրցակիցներ հանդիսացող պետությունների հետ, ինչպես և աֆրիկական ցեղերի աննկարագրելի տանջանքների գնով կուտակեց հակարական հարստություն : Մինչև 18-րդ դարի կեսերը առևտրական կապիտալի գործունեյությունն ընդգրկում եր գլխավորագեռ Առանատիկի ավագանը և բոլոր մեծ պետություններու, վորոնց ափերը վողողում եյին Ասլանտյան ովկիանոսի ամբոխը . Անդիման, Հունանդիման, Ֆրանսիան, Իսպա-

նիտն և Փորթուղարկան, պայքարում ելին միմյանց հետ  
տիրապետելու այդ հսկայական ավաղանին, վորի սահ-  
մաններն ելին յերեք յերկրամասերը՝ Յեկրոպան, Աֆրի-  
կան և Ամերիկան։ Անդլիայի 1642-1648 թ.թ. բուրժուա-  
կան հեղափոխությունը և Կրոմիլիի դեկտատուրան հար-  
գածեցին ֆեոդալական իշխանությանը և սահմանափակե-  
ցին պետության իրավունքը՝ խառնվելու կատիտավլիմի  
ազատ զարգացման գործին։ Բուրժուազիայի այդ հաղ-  
թանակը Անդլիային խոչը առավելություն տվեց իր  
ախոյանների հանդեպ։ Նրանցից միայն Հոլլանդիայում  
դոյություն ուներ կիստհանրապետական իշխանության  
ձև և քաղաքական հղոր գասակարդ՝ բուրժուազիան։  
Կրոմիլիի կառավարությունը Հոլլանդիայի հետ պայ-  
քար սկսեց և 1688 թիմ՝ անդլիական յերկրորդ հաղթա-  
կան հեղափոխության ժամանակ տեղի ունեցավ նաև  
Հոլլանդիայի վերջնական պարտությունը, վորից հետո  
Հոլլանդիան կախյալ վիճակի մեջ մնաց անդլիական ա-  
ռևտրական կապիտալից։

Կրոմիլիի դիկտատուրայի ժամանակ անդլիացիներո  
դաղութագման մեջարկեցին Արևմտյան Հնդկաստանի  
(Վեստ-Ինդիայի) գլխավոր կողիներու։ Բացի որանեղ  
սկսեցին զարգանալ և ամրապնդվել նաև Հյուսիսային  
Ամերիկայի ափերում ընկած անդլիական զաղութները։  
Այսուհետեւ աննկարապերիի զամանությամբ նվաճվեց  
Իրանդիան, վորտեղ անդլիացիները փոքրացրին ամրոջ  
քաղաքների առգարնակությունը, առանց սեռի և տարի-  
քի խտրության։ Աֆրիկայի արևմտյան ափերում զգալի  
չափով ափելացան առևտրի համար ստրուկներ մատա-  
կարարող ֆորպոստները։ Անդլիական բուրժուազիան  
հաջող կերպով ճնշելով ներսի թշնամուն (Փետդալիդին)  
աշխուժությամբ սկսեց նվաճել անդլամթերքներով և  
պերճության թանդարժեք իրերով հարուստ յերկոների  
չուկանները։ Ամերիկայից անդլիացիներն արտահանում  
են մորթիներ, սննդամթերք, ծխախոտ, բրինձ,  
Արևմտյան Հնդկաստանից՝ չաքար, Աֆրիկա-  
յից՝ սևամոբթ առօրւկներ, Ամերիկայի և Արե-

մտյան Հնդկաստանի պլանտացիաներում աշխա-  
րում աշխատեցնելու համար։ Անդլիացիներն իրանդիան  
բաժանեցին խոչը կալվածների, վորոնք անդլիական  
լենդլորդերի<sup>1)</sup> սևիկականություն դարձան, իսկ հողա-  
զուրկ գյուղացիությանը մեկ յելք մնաց՝ միայն սովո-  
մահ լինել։ Սրեւէլի հետ առևտուրը սկսվեց զեռես  
1600 թիմ, յերբ կազմակերպվեց վաճառականների այն  
ընկերությունը, վորը մոնոպոլ (մենաշնորհային) իրա-  
վունք<sup>2)</sup> ստացավ առևտուր անելու Հնդկաստանի և Սրե-  
ւէլի մյուս յերկրների հետ, վորոնք այդ ժամանակ  
հայտնի ելին։ Հնդկաստանի արևմտյան ափում՝ Սու-  
րաթում և այլ վայրերում հիմնվեցին «Փակտորիաներ»,  
կամ առևտրական կետեր և առևտուր սկսվեց «մեծ մո-  
ղովների»<sup>3)</sup> և Հնդկական իշխանների հետ։ Հնդկաստանի  
զաղութացման մասին զեռ խոսք չկար, քանի վոր յեց-  
կիրը դեռևս կարողանում եր ուժգին հակահարվածներ  
տալ ուսարյերկրյա յուրաքանչյուր մի ինտերվենցիայի։

Հնդկաստանում անդլիական վաճառականները շու-  
տով սկսեցին պայքար մզել փորթուգալական և հոլլան-  
դական վաճառականները դամ, վարուք բրնց հուրժին  
նույնպես առևտուր ելին անում այդ յերկրում։ Ան-  
դլիացիները հրկիղում ելին իրենց մրցակլիցների առե-  
տրական պահեստները, իսկ վաճառականներին սպա-  
նում ելին։ Հոլլանդացիները և փորթուգալացիները  
պատախանում ելին նույն ձեւերով, և յերկու կողմերն  
ել միաժամանակ փորձում ելին իրենց կողմը քաշել  
«մեծ մողովներին»։ 1685 թ. Հնդկաստանի կառավարու-  
թյունը պատերազմ հայտարարեց Արևելյան Հնդկաստա-  
նի (Ռատինդիա) ընկերության դեմ և վարկեց նրա նավա-

1) Անդլորդ—խոչը կալվածատեր։

2) Մոնոպոլ իրավունք-համարված ապրանքներ Տախելու բաշտ-  
ուկ իրավունք, ներկա գելքում Հնդկաստանի և Սրեւէլի յերկրնե-  
րի ապրանքները։

3) «Մեծ մողովներ»—թուրքական դինաստիա յերբ, վոր էման

Հանդիսաների մեծ մասը : Չնայած դրան, ընկերությունը սկսեց լայնացնել իր գործունեյությունը և հիմնեց նոր առևտրական կետեր, դրանց թվում կալկաթայի նավահանդիսատը, զորը հետազում խոչը սշաստվում էնուն ունեցավ : Չնայած այդ բոլորին, 17-րդ դարի վերջում անդլացիների կալվածքությունը հաղկասասաւա շատ շատ ելին իրենց մեծությամբ, ընդամենը մի քանի քառակուսի մղոն : Մի քանի խոչը նավահանդիսատներ, ինչպես որինակ՝ բոլքելը և կալկաթան, միաժամանակ հանդիսանում ելին Սրբելյան Հնդկաստանի կամպանիայի Փորտերը<sup>1)</sup> և նրանց միջոցով կատարվող առևտությունները չեկամուտ եր բերում ընկերությանը, զորի ակցրուսերները չափից դուրս հարստացան :

Դրամական տնտեսության զարգացումը 17-րդ դարում և հողային հարկը վոչ թե բնատուրքով, այլ արծաթով մուծելը, Հնդկաստանի տնտեսության մեջ ասրաւութելի ճշնաժամ առաջացրեց : Հողային հարկը այդ հարյուրամյակի ընթացքում ավելացավ համարյա յերկու անդամ . վաճառականների, բանկիրների, և վաշխառուների տիրապետությունը սկսեց արագ կերպով ուժեղանալ : Հնդկի գյուղացիներն ու արհեստավորներն ամեն կողմից նեղվելով քայլայվում ելին : Առևտրական կապիտալի ուռնացումը ել ավելի ուժեղացնում եր ընդհանուր անարխիան, զոր տիրում եր 17-րդ դարի Հնդկական ֆեոդալական հասարակարգում : « Ենք մողոլների » դեմ բարձրանում եր գյուղացիական հզոր շարժում և մի շարք դասակարգային դատան կոլիները ցնցեցին Հնդկաստանին (մահատ և սիկհի սեկտաների շարժումը<sup>2)</sup> : Անդլացիները հոգուտ իրենց շահերի շատ լավ կարողացան ողտագործել իրերի նման դրությունը և ներքին պայքարին զուգահեռ, զորը քայլայում եր Հնդկական ֆեոդալական հասարակարգը, ծայր առավ Անդլացի

և Ֆրանսիայի միջև մի սոսկալի պատերազմ՝ Հնդկաստանի տիրապետության համար : Արևելյան Հնդկաստանի ընկերության սպաններն ու պաշտոնյանները շատ ճարպիկ կերպով իրականացրին « բաժանի՛ր, վոր տիրես » սկզբունքը, վոր ինչպես Մարքսն և նշել, հետագայում անդրիական քաղաքականության հիմնաքարը դարձավ : Ֆրանսիացիները Հնդկաստանում յերեացին շատ ուշ, և բացի որպանից, նրանք չունենին յերկու հեղափոխությունների փորձը և բուրժուական պետության կողմից ցուրց տրվող ուժանողակությունը, վորոնցից թե մեկը և թե մյուսը անդլացիներին անմիտելի առամելությունն եր տալիս հանդեպ իրենց մրցակիցների : 1815 թվին Հնդկաստանի գրեթե մեծ մասը վերածվեց անդլական դադութի :

Արևելյան Հնդկաստանի ընկերությունը սկզբանական շրջանում Հնդկաստանում մարում եր բացառձակ թայանի քառարականություն : Անդլիացիները Հնդկաստանից սկսենին արտահանել նրա անբար հարստությունները, իսկ հնդիկ գուղացիությունը յենթարկմում եր անյուր շահագործման : Նրանց յենթարկում ելին տանջանքների, վորը հետագայում սիստեմ դարձավ հարկեր գտնձելու համար : Հնդկաստանի նման դիշատիչ թայանը՝ Արևելյան Հնդկաստանի համարնիա ին հսկարական ոգուտներ բերեց և անդլիական բուրժուադիայի համար հանդիսացավ հարստանալու յերկրորդ (սև ստրուկների առևտություններու) հիմնական աղբյուրը և, վորը նրան հընարավորություն տվեց մինչև վերջ տանելու արդյունաբերական հեղափոխությունը, արուտնաբերության զարգացման նոր կապիտալիստական ձեւ՝ գործարանային արդյունաբերությունը :

18-րդ դարի վերջում Ֆրանսիայի հետ պայքարը վերջացավ և անդլիացիները սկսեցին կաղմակերպված կեռոյթ յահառողձեւ հնողիկ դատապահությունունու : Դա հետ միաժամանակ նրանք չմոռացան պարզեատրել հրնդիկ հասարակության այն մասին, վորը Հնդկաստանի նվաճման գործին իրենց մեծ ծառայություն եր մատու

1) Ֆորտ—ռազմական ամբություն :

2) Մահարաշտր՝ ցեղերի խոչը միավորություն. սիկհի ֆանգարում կրօնական սեկտա :

գել, այն ե՞ւ հարուստ վաճառականներին, վաշխառուներին և այն: Բենդայիմայի հարուստ նահանգում գյուղացիները զրկվեցին իրենց հողի սեփականության իրավունքից և սահմանվեց հողատիրության մի սիստեմ, վորն իրենից ներկայացնում եր Անդլիայի կալվածատիբան հողատիրության մարտահարը: Տեղական բուրոկրատիան և վաճառականությունը ստացան խոշոր կալվածքներ և իրենց հայեցողությամբ վարձակալական ըներ նշանակելու իրավունք: Բենդայիմայի նորաստեղծ կալվածատերերը զեմինդարներն անդլիական իշխանությանը պետք է վճարելին վորոշ և մշտապես նույն չափի հողալին հարկ, վորի հետևանքով այդ հողատիրական սիստեմը կոչվեց «մշտական»: Բոմբեյում և Մագրասում հաղթողներն իրենց ձեռքն առան «մեծ մողոլների» հայուկին ի, իմանությունը և ամրող հողը հայտարարեցին անդիտական իշխանության սեփականություն: Հողային հարկերի գումարներն անդլիացիները սահմանեցին մի շարք տարիների համար (ամենայերկար ժամկետը 30 տարի յեր). այդ հարկերը վճարելու համար պահանջվում եր գուղղացիական տնտեսության բերքի համարյա 80%-ը: Մագրասում հողային հարկերը միանդամայն քայլայեցին գյուղացիներին և շատ զեղքեր ելին լինում, վոր գյուղացիներին տանձանքների ելին յենթարկում, վորպեսզի ստիպեն նրանց հարկերը վճարելու: Արեւյան Հնդկաստանի կամպանիան ամեն տարի գետի Անդլիա յեր արտահանում հսկայական գումարների թանգարին մետաղների ձուլածոների հնդիկ մասսաների շահագործման արդյունքը: Այդ յեկամուտները մտնում ելին ակցիոներների դրամաները, ինչպես և ծախսվում ելին Անդլիաի բյուրսիկատա արժմինիստրացիա ի պահպանման, ընկերության պաշտոններության կենսաթոշակների և ընկերության կողմից Հնդկաստանում պահպող սեփական գորքի համար պալաներ պատրաստելու վրա:

Առևտրական մոնոպոլ ընկերությունները, վորոնց ամենազորեղը Աստինդլիականն եր, առևտրական

կապիտալիզմի շրջանում հանդիսանում ելին անդլիական զաղությային քաղաքականության հիմքը: Նրանք ստանում ելին զաղությների առևտորի մենաշնորհը և սգտը վում ելին իրենց կառավարության լայն աշակցությամբ, նրանց նույնիսկ թույլատրվում եր պահել սեփական բանակ և նավատորմ:

Անդլիական կառավարության ուսակետով՝ զաղությներում ամեն ինչ չահագործման առարկա պետք է հանդիսանար, նույնիսկ այն անդլիացիները, վորոնք գաղությների առևտորի մենաշնորհը և սգտը վում ելին իրենց կառավարության լայն աշակցությամբ, նրանց նույնիսկ թույլատրվում էր պահել սեփական բանակ և արգելում եր նրանց այլ յերկրների հետ առևտուր անել: Անդլիայի գաղությները սպարտավոր ելին իրենց ամրող ապրանքներն արտահանել Անդլիա և այն ել անդլիական նավերով. բացի զրանից՝ նրանցից գահագում ելիս և մեծ հարկուր: Եսաս օրինակը վերջի վերջո ապատամբություն առաջացրեց Ամերիկայում զանվոր անդլիական զաղությներում և յերկար հեղափոխական պայքարից հետո 1776 թվին կաղմակերպվեցին անկախի Հյուսիսամերիկական միացյալ նահանգներ: Զնայած նման զգալի հարվածին, Անդլիան Ամերիկայի կորուսոր փոխարինեց Հնդկաստանի նվաճմամբ, ինելով Փրանսիացիներից այն տերիտորիան, վորի վրա նրանք աչք ունեցին, խելովնակ հնդիկ իշխաններից նրանց հողերը: Անդլիական բուրժուազիան իր ամերիկական զաղությների հետ մղած պայքարից ողտակար զառ ստասալով, այդ իսկ մոռանելոց ուսուց առվական ծաղում ունեցող զաղութականներին աղատություն տալ տնտեսապես զարգանալու, ուժեղացնելով միաժամանակ տեղական պղպարնակության շահագործումը: Յեղրափակելով՝ կարելի յե ասել, վոր 200 տարվա ընթացքում (1600-ից միջեւ 1800 թ.) Անդլիայի քաղաքականությունը յեղել եղիւատիչ ու ավաղակային քաղաքականություն: Գաղությների վրա նայում ելին, վորպես վաստակի մի աղբյուրի, վորպես անդլիա-

կան բուրժուազիայի արագ հարստանալու մի միջոցի  
վրա:

«Գաղութային սիստեմը հոչակեց հարստացումը,  
վորած մարդկության վերջին և միակ նպատակը» :

## ԱՆԳԼԻԱՅԻ ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՀԶՈՐՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԳԱ ԶԱՐԴԱՅՈՒՄԸ

Արդյունաբերական կապիտալիզմի դարաշրջանը  
սկսվելուց հետո, գաղութների նկատմամբ այլ տեսա-  
կատ առաջայագ: Երբէյուսաբնը ական հեղափոխու-  
թյունն Անգլիայում, վոր ստեղծեց ժամանակակից կա-  
պիտականական հասարակարգը, սկսվեց 1760 թվին,  
իսկ յերկրի ինդուստրացման պրոցեսը, ընդհանուր զը-  
ծերով վերջացավ 1850 թ.: Այդ ժամանակաշրջանում  
նոր արդյունաբերական բուրժուազիան, ձգտելով իր  
ձեռքն առնել քաղաքական իշխանությունը, սայայքարում  
եր իշխանության գլուխ կանգնած խոչըն հողատիրու-  
թյան և առևտրական կապիտալի բրոկի գեմ: Պրոտեկ-  
ցիոնիզմի<sup>2)</sup> հին սիստեմը—պետք ե ընկներ և իր տեղը  
դիմեր ազատ առևտրի սկզբունքին: Հարկ յեղավլ վերա-  
ցընելու և մոնոպոլ ընկերությունները և մենաշնորհի  
փոխարեն ազատ կոնկորենցիայի դարաշընանն սկսվեց:

Անգլիան համաշխարհային արդյունաբերական  
մոնոպոլիստ եր և մյուս յերկրները ստիպված եյին նը-  
րանից դնելու արդյունաբերական ռործվածքները, այս-  
պիսով ազատ առևտրի սիստեմին անցնելը բղխում եր  
անգլիական առևտրարդյունաբերական բուրժուա-  
զիայի կենացական շահերից: 19-րդ դարի առաջին յերկու

1) Մարքս—կապիտալ, 1 հատոր:

2) Պրոտեկցիոնիզմ—բառացի նշանակում և հոլոնավորու-  
թյուն: կապիտալիստական մի քաղաքականություն և, վոր հո-  
վանավորում և ավելի բարենպաստ պայմաններ և ստեղծում ներ-  
քին և արտաքին շուկաներում եր յերկրի ազրանքների համար,  
ոտարյերյա ազրանքների նկատմամբ արդելող մաքսեր և ար-  
տահանվող ազրանքների վերաբերյալ իրավուսական պրեմիաներ  
առաջանելու ճանապարհով:

յերրորդում, մոտավորապես մինչև 1870 թիվը՝ անդա-  
լիական արդյունաբերությունն ամբողջ աշխարհում  
գրավում եր մոնոպոլ գրություն: Նրան հարկավոր եյին  
ազատ շուկաներ՝ անդլիական ինդուստրիայի ար-  
տադրանքը վաճառելու համար, իսկ մյուս յերկրներից  
նա իր ապրանքների փոխարեն ցանկանում եր ստանալ  
սննդամբներներ և արդյունաբերական հումուրից: Բոխ-  
տանական կայսրությունը շարունակում եր ընդլայնվել:  
Այդ ընդլայնումը կատարվում եր գլխավորապես Աֆրի-  
կայում և Հնդկաստանում: 1814 թվին անդլիացիները  
նվաճեցին Կապ գաղութը. 1843 թվին Նաթալը անդլիա-  
կան գաղութ գարձավ, իսկ 1849 թ. Հարավլ Աֆրիկայի  
Որանժ գետի ըրջանը լանի կերպով խլվեց հոլլանդական  
Փերմերների ձեռքից, չնայած մի քանի տարուց հետո  
հոլլանդական Փերմերներին հաջողվեց անկախություն  
ձեռք բերել: Անդլիական տիրապետությունը ամրանում  
և ընդլայնվում եր նաև Հնդկաստանում: 1843 թվին անդ-  
լիական տիրապետությանը միացվեց նաև Սինդը, իսկ  
սիկհի գյուղացիների գեմ մղվադր շատերապես բեր  
ջացան նրանով, վոր անդլիացիները հափշտակեցին Փեն-  
ջարը: Բիրմայի հետ մղվադր պատերազմը նույնպես վեր-  
ջացավ այլ յերկրի նվաճումով 1852 թվին: Անդլիական  
փոխարքա Դալանուղին (1849–1856 թ.թ.) գրավեց Հնդիկ  
իշխանականների բարձրակի մշակման համար պիտանի  
հողերը (Աւգ, Բնըրար, և այլն):

Կիսածովահենային հարձակումների միջոցով ան-  
լիացիներն ամրացան Մալակայի նեղուցում և Սարա-  
վակ կղզում, իսկ 1841 թ. չիսացիները ստիպված յե-  
ղան իրենց նախահանդիսաները բանալու Հնդկաստանից  
բերլող ովկումի առևտրի համար և զիջեցին անդլիա-  
ցիներին Հոնկոնգ կղզին:

Այս բոլորից յերեվում և, վոր արդյունաբերական  
եքսպանսիայի<sup>3)</sup> ըրջանը բոլորովին չեր նշանակում,

3) Եքսպանսիա—առեվորական, արդյունաբերական, Փինան-  
սական կապիտալ ազգեցության լայնացումը իր յերկրի սահման-  
ներից գուրս:

թե գաղութային պատերազմները վերջացան ։ Ավելի  
շուտ զդալի կերպով փոխվեցին դադութային չաշա-  
դործման մեթովները։ Գաղութների Փունկցիաները՝  
քանձիւլիք հարկերով հարստացնել բուրժուազիայի ար-  
տոնյալ մասին և առևտրի համար Անդլիա ուղարկված  
պերճության առարկաներ մատակարարելը մնացին,  
սակայն նրանց հետին պահան անցան զաղութների նոր  
դերի հանդեպ. զաղութները դարձան անդլիական ար-  
դյունաբերության չուկաներ և հումույթային բազա։  
Անդլիական բամբակեղին դործվածքների ներմուծումը  
Հնդկաստան վնասեց տեղական մանուֆակտուրային  
արդյունաբերությունը, իսկ բամբակի մշակույթի  
դաշտերի հափշտակումն անդլիացիների կողմից՝ ա-  
ռաջացրեց տեղական Փեղալ իշխանների և խոշոր  
հողատերերի գեցությունը, վորմնք առաջ անդլի-  
ական գերիշխանության գլխավոր նեցուկն եյին հան-  
դիխանում; Պատերազմներ մղելու համար հնդկական  
կառավարության համար անհրաժեշտ գրամները,  
ինչպես և Անդլիայի տարեկան հարկերը քամվում եյին  
գյուղացիներից, չատ հաճախ տանջանքների միջոցով։

1857 թ. Հնդկաստանի հյուսիսային շրջաններում  
անդլիական իմպերիալիզմի դեմ ուժեղ ապստամբու-  
թյուն ծագեց; Ապստամբությունը կրում եր գլխավո-  
րապես զինչորական բնույթ։ Ապստամբությանը մաս-  
նակցում եյին հնդիկ զինվորները, մեծ մասամբ հա-  
րուստ գյուղացիներից, իսկ նրանց զեկավարում եր  
իրենց կալվածքներից զրկված Փեղալական աղնվա-  
կանությունը, վորին, սակայն, այս պայքարում ուժան-  
դակում եր գյուղացիության ամբողջ մասսան։ Անդլի-  
ացիները արտասովոր դաժանությամբ ճնշեցին այդ  
ապստամբությունը։

1858 թ. Հնդկաստանի իշխանությունը լուծարվե-  
ցնթարկված Արևելյան Հնդկաստանի ընկերությու-  
նից անցավ անմիջապես անդլիական կառավարությա-  
նը։ Այսպիսով Հնդկաստանն անցավ արդյունաբերա-  
կան կապիտալի ձեռքը, վորն անմիջապես սկսեց կիրա-

ռել նոր քաղաքականություն՝ այսպես կոչվող պա-  
ղութների և «գարգարման» քաղաքականություն։ Յեր-  
կրում կառուցվեցին յերկաթուղիներ, սակայն վոչ թե  
յերկրի տնտեսական զարդարման, այլ եքսպորտային  
առևտրի և ռազմական կարիքների համար։ Այդ ճահա-  
պարհները շինուամ եյին Հնդկաստանի ժողովրդական  
մասսաների միջոցով և այդ պատճառով դրամները  
ծախսվում եյին անխնա կերպով։ Թե անդլիական կա-  
պալառուները և թե յերկաթուղային բաժնետերերը  
հսկայական կարողություն դիմեցին։ Անդլիացիները  
կատարեցին նաև մի շարք վոռողման աշխատանքներ,  
նույնպես հնդիկ գյուղացիություննից հավաքված մի-  
ջոցներով։

Անդլիական կառավարությունը միաժամանակ  
վարում եր յերկրի բոլոր Փեղալ ու Հետադիմական  
ելեմենտներին հովանափորելու քաղաքականություն,  
նաև բանանում եր նրանցից անդլիական տիրապետու-  
թյան համար նեցուկ ստեղծել և այդ ճանապարհով  
կանխել 1857 թ. շարժմանը նման չարժումների կըրկ-  
նությունը։

Այսպիսով Հնդկաստանի «գարգարումը», մորուկ  
այնքան պարծենում եյին անդլիացիները, իրականում  
կատարվում եր այն ուղղությամբ և այն չափերով, փոր  
չափով վոր այդ համապատասխանում եր անդլիական  
կաղիտալիզմի պահանջներին, և վոչ թե տեղական աղ-  
ղաբնակության չափերին Զնայած անդլիացիները Հրնդ-  
կաստան մտցրին կապիտալիստական արտադրության  
ձևերը, սակայն այդ «գարգարումը» վոչ միայն քարե-  
լավից հնդիկ մասսաների զրությունը, այլ ավելացրեց  
նրանց աղքատությունն ու իրավագրկությունը։

Վորչափով վոր Հնդկաստանը մնում եր զարութ,  
վորի գլխավոր կոչումն եր անդլիական շուկային գյու-  
ղատնեսական մթերքներ և արդյունաբերական հու-  
մությ մատակարարել և իր հերթին անդլիական արդյու-  
նաբերության արտադրանքի շուկա ծառայել և մետրա-

պոլիտիկն') հարկ վճարել, —այն չափով ել տեղական հնդկական կապիտալիզմի զարգացման ճանապարհները պետք եւ սահմանափակ մնային:

18-րդ դարի կեսերին անդիքական ինդուստրիայի հումույթի հատկապես բամբակի պահանջը, մեծ չափով ավելացավ.՝ ավելացավ նաև գործարանային կենտրոնների աղքարնակությունը, իսկ մետրոպոլիսայի դյուզատնուությունը չեր կարողանում բավարար չափով հասցել եժան սննդամթերքներ անդիքական կապիտալիզմի սարուկներին: Բացի դրանից 1860-61 թ. թ. Ամերիկայում տեղի ունեցող քաղաքացիական կոփչների հետևանքով, Անգլիան չեր կարող այնտեղից բամբակ ստանալ: Այդ պատճառով նա Հնդկաստանին պարտադրեց ավելացնելու բամբակի դաշտերի տարածությունը, իսկ բրիտանական կայսրությանը ցորեն մատակարարելու ասպարիզում Փենջաբը բանեց յերկրորդ տեղը: Շատ արագ կերպով մեծացավ նաև բննծի և սննդամթերքների արտահանումը դեպի Անգլիա:

Անգլիական կառավարությունը իր դաշնակիցների՝ հնդիկ կալվածատերների և վաշխառուների հետ միասին, մի շարք բոնի անտեսական և քաղաքական միջոցառումներով, հնդիկ դյուզացու տնտեսությունը հարմարեցրեց գյուղատնտեսական տեխնիկական կուլտուրաներին՝ եքսպորտի նկատառումներով: Աղքատ և հետամրնաց հնդիկ գյուղացիության անտեսության ուժերից վեր եր նման ծանրաբեռնումը: Սարսափելի սովոր սկսեց ավերել յերկրը:

1856 թվին միայն Որիսա շրջանում քաղցից մահացան մեկ միլիոնից ավելի մարդ: 1873-74 թ. սովոր սկսվեց նաև Բիհարայում: Սովոր դեմ պայքարելու համար չնշին ոժանդակություն հասցըրին մի քանի ֆիլան-

1) Մետրոպոլիտա-տյն ակտությունը, վորին յենթարկում եւ քաղութը:

տրոպներ<sup>1)</sup> , ծախսելով վորոշ միջոցներ այդ նպատակի համար: Սակայն նման կարգի բարեգործությունն անդիքական կապիտալիզմի հաշակին անհանդուրժելի յեր և սովոր դեմ պայքարելու համար ծախսվող գումարները ճանաչվեցին վորպես ավելորդ շուայություն: Յերբ 1876-78 թ. թ. պատմության մեջ հաեւնածած ամենասարսափենի սովոր նորից սկսեց ավերել Հնդկաստանը, անգլիացիներն այս անդամ արդեն չկրկնեցին իրենց նախկին «սխալո» ողներու սովորաներին և սովոր այս անդամ կոտորվեցին 5-ից մինչև 6 միլիոն դյուզադի: Հնդկաստանի ազգաբնակությունը մեռնում էր միլիոններով, իսկ Անգլիան, քողարկելով «առատ առեւտրի» սկզբունքով, արունակում էր Հնդկաստանից արտահանել սննդամթերքները: Բացի դրանից՝ անգլիացիները մի ոռութիւն<sup>2)</sup> անդամ չի եղացրին սովոր չըցանների հոդային հարեր: 19-րդ դարի վերջում սովոր բոնկվեց 1896-97 թվերին. այս անդամ սովորաների թիվը հափազանց մեծ էր՝ 70 միլիոն մարդ և տաս հոգուց մեկը մահանում էր քաղցից: 1896 թ. վերջին բամբեյում բոնկվեց բուրմանային ժամանակակի համաձարակեր, վորը սլանարով աղքատ ու սովոր յերկրի վրայով՝ իր հետ տարափ յերեք միլիոն մարդկային կյանք: Այսախով, անգլիական կապիտալիզմի «լուսավորոո» գործունեցության հիմնական հետևանքը գաղութներում յեղակ մասսաների ծալր աստիճան աղքատացումը և մահացության հսկայական աճումը:

Անգլիական կապիտալիզմը շահագործելով Հնդկաստանը, վեր ածեց նրան հումուռթային բազայի, վորը բարարարում էր անգլիական արդյունաբեռության հումուռթի պահանջը, մատակարարում էր սննդամթերքներ

1) Ֆիլանտրոպ-բարերար, մարդասեր:

2) Ռուտիխա՝ Հնդկաստանի դրամական միավորն է: Մեկ ռուպիան=1 չիլիոդ և 6 պենսի=75 կոպ.: Մեկ չիլիոդ=47 կոպ., մեկ պենս=մոտ 4 կոպ.:

և միաժամանակ Հանդիսանում եր անդիբական տպրանքաների չուկա : Հետզհետե Անդիբայի համար մեծանում եր Հնդկաստանի նշանակությունը : Հնդկաստանը սկսեց բռնել Անդիբայի արտաքին և ներքին ռածմական քաղաքանության մեջ կենտրոնական տեղ : Անդիբայի սահմանների պաշտպանությունը կենտրոնացվեց Հնդկաստանի սահմանների (Խիբերյան լեռնանցքի) պաշտպանության վրա, իսկ գետի Հնդկաստան տանող տանուրական և սաղմական ճանապարհների պաշտպանությունը գործեց առաջին պրանի վրա, ստեղծելով բրիտանական խմբերի խառների համար մի շարք նոր և բարդ դաշտային հարցեր :

1839 թվին անդիբայիները գրաւեցին Ադեն նաև Հանուստը՝ վորո գտնվում և կարմիր ծովը Հնդկական ուժի հանուսին միացնող նեղուցի մրա : Արդ նաև ճանդիսար սկսեց ծառայել անդիբական նախատոմմի համար վրասե ածխաւին կայան և բազա : 1869 թմին ամարտվեց Սուեդի ջրանդքը, վորը միազրեց Մհերերական ծով կարմիր ծովին : Սուեդի ջրանց օրի միջողով ստեռծվեց ջեպի Հնդկաստան տանող ծովային ամենակարծ ճանապարհը : Շուտով դրանից /Հետո, 1875 թ. անդիբական կառավագությունը ձեռք բերեց անանեացած յեղիպտական իներիմից<sup>1)</sup> Սուեդի ջրանցքի ակցիաների կոնարությին մասը :

1876 թ. Անդիբան և Ֆրանսիան, մորպես իներիմի գլխաւոր մարկավորողներ, նաև անդիբային իրենց Փինանսական և ունտրություններին և յեգիպտական կառավագության Փինանսները վերորին իրենց ձեռքը : Անդիբական և Ֆրանսիական չինունինեների գործունեությունը վերջանավ իներիմի սահմանեցությամբ, վորի միուսուն Անդիբան և Ֆրանսիան նաև անդիբային իրենց արբանյակին : Հետադարձ յեռանդուն միջողներ ձեռք առնմեցնեն վոր պետքի յեգիպտական գլուզացիությունից դանձնեն յեգիպտական կառավարության կողմից անդիբական և

<sup>1)</sup> Եեղիմ—յեգիպտական թագավոր :

փրանսիական հարկատաւներին տրվելիք տոկոսները : Այդ ժամանակ յեգիպտացիները վորոշեցին պայքարել ուսարերկրյա միջամտության վեմ և կաղմեցին աղջային կառավագարություն՝ Արարի-կաշայի գլխավորությամբ : Անդիբայիները պատասխանեցին Ալեքսանդրիայի ուժակոծմամբ, պատճառ բանելով բրիտանական հպատակի մի քանի վաճառականների սպնությունը, վորոնք հոչութել եյին Ալեքսանդրիայի գաղաղած ամրությի կողմից, և սկսեցին յերկրի նվաճումը : 1882 թվի վերջում Ալմարի-վաշան գերի վերցրվեց, իսկ Եեղիպտուրը՝ փատացի կերպով դարձավ անդիբական գաղութ, չնայած՝ վոր ձևական տեսակետից այլպիսին չեր հաշվում : Անդիբական իմպերիալիզմի համար Յեղիպտոսը մի չափազանց թանգարժեք գյուտ եր՝ նախ և առաջ նա հսկայական նշանակություն ուներ Սուեդի ջրանցքի և գեղի Հնդկաստան տանող ճանապարհի պաշտպանության տեսակետից և յերկրորդ՝ Նեղոսի հովտում կանունում եյին աշխարհի ամենալավ բայթակի պլանտացիաները, իսկ Սուեդանի հսկայական տարածությունները հնարավորություն եյին տալիս լայնացնելու բամբակի դաշտերը՝ մինչ Աֆրիկայի սիրտը :

1883 թ. Սուեդանի գյուղացիները պալստամբվեցին իրենց անդույնեգիպտական շահագործողների գեմ և նրանց վոնելեցին Սուեդանից : Սակայն յերկար չուեց առաջամբների հաղթանակը : Անդիբայիները Սուեդան ուղարկեցին ուղղական խոշոր ուժեր և 1898 թ. Սուեդանը վերջնականապես նվաճվեց :

Անդիբական կապիտալիզմի թափանցումը դեպի Աֆրիկա ավարտվեց անցյալ զարի 80-ական թվականներին : Արևելյան և Արևմտյան Աֆրիկայում անդ իշական կապիտալիզմը ելլ դիմեց 17-րդ դարի դաղութային մեթոդներին : Հսկայական և դեռ ևս վոչ վորի կողմից չնվաճված յերկրների զրավումն ու շահագործումը նորից հանձնվեց մոնոպոլ ընկերություններին : Այսպիս, 1886 թվին առևտրական մենաշնորհ ստացավ Նեղիպտական թագավորական ընկերությունը, վորն Արև-

ժայռան Աֆրիկայում հիմնեց Վոսկե ափ և Նիդերիա խո-  
չոր գաղութները: 1888 թ. Արևելյան Աֆրիկայի շահա-  
ղործումը հանձնվեց «Բրիտանական Արևելյան Աֆրի-  
կայի կայսերական ընկերության», իսկ 1889 թ. «Բրի-  
տանական հարավաֆրիկական ընկերությունը», վորի  
թիկունքում կանգնել եր հայտնի անդլիական իմպերիա-  
լիստ Սեսիլ Ռոդզը, ձեռնարկեց այն ըլջանների շահա-  
ղործմանը, վորոնցից հետապայում կազմվեց Ռոդեզիա  
դաշտություն: Այսպիսով Աֆրիկայի նվաճումը կատարվեց  
մոնոպոլ ընկերությունների ոժանդակությամբ, այն-  
պէս, ինչպէս 200 տարի առաջ ծովահենների և ավա-  
ղակների ձեռքով նվաճվեց Հնդկաստանը:

Սակայն նվաճած յերկրների շահագործումը հիմա  
բոլորովին այլ ուղիներով են ընթանում: Սկսվեց իմ-  
պերիալիզմի դարաշրջանը, Փինանսական կապիտալի  
դարաշրջանը: Աֆրիկայի մոնոպոլ կամպանիաները այլ-  
ևս չեյին հանդիսանում առեւտրական կապիտալի հասա-  
րակ ճյուղավորումները, նրանք սերտ կերպով կապված  
եյին մայր յերկրի բանկերի և ծանր արդյունաբերու-  
թյան հետ: Նոր դաշտութներն անմիջապես յենթարկվում  
եյին մետրոպոլիայի կապիտալի կողմից ամենաանզուսպ  
շահագործման: Այսուղ կառուցվում եյին մեծ ծախսեր  
կլանող յերկաթուղային և ավտոմոբիլային ճանա-  
պարհներ, նավահանգիստներ, արտահանվում եյին  
տրոպիկական գյուղատնտեսական կուլտուրաներ, վո-  
րոնք անհրաժեշտ են ժամանակակից ինդուստրիայի  
զարգացման համար: Այդ ուղղությամբ ամենից արժե-  
քավոր դաշտութը Արևմտյան Աֆրիկան եր:

Նոր դաշտութները դարձան բրիտանական կայսրու-  
թյան բաղկացուցիչ մասը: Նրանց զեկավարությունը  
հետզհետե մոնոպոլ ընկերություններից անցան անմի-  
ջապես անդիմական կառավարության ձեռքություննե-  
րի վրա ավելացան նաև կայսերական վարչական ասլա-  
րատի պահպանման խոչը ծախքերը: Այսպես՝ 1896  
թվականից մինչև 1928 թ. Արևմտյան Աֆրիկայի բոլոր գա-

ղութների առևտրական ըլջանառությունն ավելացավ  
համարյա 7 անգամ, իսկ կառավարական յեկամուտներն  
աճեցին նույն ժամանակաշրջանում ավելի քան 10 ան-  
գամ:

Իմպերիալիզմի դարաշրջանը սկսվելուց հետո, Ան-  
գլիայի զաղությային քաղաքականության մեջ տեղի ու-  
նեցան մեծ փոփոխություններ: Նոր, հզոր ինդուստրի-  
ների զարգացումը, հետզհետե նրանց աճող կենտրոնա-  
ցումը, Փինանսական կապիտալի հսկայական զարգա-  
ցումը՝ այդ բոլորը դաշտութներին դրեց մետրոպոլիայի  
նկատմամբ նոր փոխհարաբերությունների մեջ:

Մալայան արխիպելագի անագը, կառուչուկը,  
Արևմտյան Աֆրիկայի բուսական յուղերը, Հնդկաստա-  
նի կաշիները և մարդանեցը այժմ ավելացան բամբա-  
կն, չութին, ցորենին, թեյին, ծխախոտին և մասս-  
ական բործածության այլ մթերքներին, վորոնք մինչև  
19-րդ դարի վերջը անդլիական արդյունաբերության  
համար դաշտութներից ստացվող զվարչոր հում նյութե-  
րն եյին կազմում: Գաղութները համուկ նշանակու-  
թյուն ձեռք բերին նաև հանդիսանալով, վորպես մետ-  
րոպոլիայի կապիտալի շահագործման ասպարեզ: 19-րդ  
դարի վերջին տասնամյակում (1890-1900 թ. թ.)  
Հնդկաստանում ուղղակի կայծակի արագությամբ կա-  
ռուցվում եյին յերկաթուղու ճանապարհները: 1898 թ.  
Կիտչեների բանակը Սուլանում կառուցեց գեղի նար-  
տում տանող գիծը, իսկ 19-րդ դարի վերջում Աֆրի-  
կայի անդլիական յուրաքանչյուր մի նոր գաղութ ունեց-  
իր առաջին յերկաթուղին: Զուգահեռարար տարվում  
եյին մի շարք աշխատանքներ, վորոնք մեծ նշանակու-  
թյուն ունեցին զաղութների զարգացման համար: Կա-  
ռարվում եյին վոռողման աշխատանքներ, գետերի վրա  
կառուցվում եյին ամբարտակներ, ծովի ափին՝ նավա-  
հանգիստներ, կառուցվում եյին նաև ճանապարհներ:  
Լոնդոնի բրոսայում յուրաքանչյուր տարի բաց եյին  
թողնվում հսկայական փոխառություններ՝ զաղութ-  
ներն ավելի հաջողությամբ շահագործելու նպատակով:

Միաժամանակ Հնդկաստանում սկսեցին զարդարական արդյունաբերության մի քանի ճյուղեր, վորոնք անհրաժեշտ էին յերկրում անդլիացիների ռազմական տիսապետությունն ամբաղնդելու համար: Հնդկաստանում ամենախոշը արդյունաբերությունը բամբակագործությունն էր: Մինչև 1914-18 թ. թ. պատերազմը՝ նաև կենտրոնացած էր գլխավորապետ անդլիական կազմակերպությունը, և նրա զարդարումը խիստ կերպով սահմանափակվում էր, վորպեսզի Էանկաչիրի<sup>1)</sup>: կազմակերպանի ձևորում՝ և նրա զարդարումը խիստ կերպով սահմանափակվում էր, վորպեսզի Էանկաչիրի<sup>1)</sup>: կազմակերպանի շահերին վնաս չհասնի: Բամբակագործական արդյունաբերության վաճառման շուկան հանդիսանում էր վոչ թե Հնդկաստանը, այլ Չաղոնիան և Ջինաստանը: Բամբակագործական արդյունաբերությունից հետո հետեւալ տեղը զբավում էր ջութի արդյունաբերությունը, վորը նույնանում ամբողջովին դանվում էր անգլիացիների ձևորում: Այստեղ գլխավոր զեր խաղացել է այս հանգամանքը, վոր ձգտում էին ողտագործել ենան բանվորական, ձեռքի վրը և յերկար բանվորական որը, ինչպես և այդ հումուզիթի մոտիկությունը, մի հումուզիթ, վորի գրեթե միակ աղբյուրը ամբողջ աշխատանքան է: Յերկաթուղային արհեստանոցները, հանքահորերը, խոչըր պողպատահալ գործարանները, մի քանի վոչ մեծ մեքենաշինարարական գործարանները, ավտոմոբիլի գործարան և նախթաղուիչ գործարաններ—ահա Հնդկաստանի ամբողջ ծանր արդյունաբերությունը, վորը հիմնվել է բավարարելու բացառապես անդլու-Հնդկական բանակի և տրանսպորտի կարիքները: Տեղական արդյունաբերության մեջցած բոլոր անսակները կապված են գյուղատնտեսության հետ, ինչպես, որինակ՝ քրնձի, թեյի, ծխախոտի և մի քանի բրդագործվածքների գործարաններ:

Հնդկաստանը ամբողջ բիտանական կայսրության մեջնախոշը բաղան է, ուր մետրոպոլիան ներդրում է

<sup>1)</sup> Էանկաչիր-բրդի արդյունաբերության կենտրոնը Անդլիայում:

իր կտակիտայները, բայց և մյուտ գաղութներն այդ ուղղությունը նմանապես անդլիական կապիտալիստների գործունելության լայնածավալազարեր են հանդիսանում: Սուդանի բամբակի դաշտերի, Մալայան կառաջուկի պլանուացիների, Արևելյան Աֆրիկայի՝ բամբակի, սուրճի և Փիբրայի համար հսկայական ներդրումներ կատարվեցին: Բացի գրանից անդլիական ինդուստրիան շատ շահեց և շուտ՝ ել զարգացագ հոսուհի կառավարության կողմից ուղղմական հայթայթումների համար կատարվող ներդրումների, վորոնք անհրաժեշտ ելին, թե զարութներն արտաքին թշնամիներից պատկանելու և թե ներքին ապստամբությունները ճնեւու համար: Իսկ անդլիական կերպանական իմպերիալիզմի մրցումը ամենի զարգացնումը էր ծովային տեխնիկան և պահանջում էր կառուցել մեծ կարողությունն ունենող սաղմանավեր, ինչպես և ամրանել նախատորմի համար աշխարհի ծռմալին ճանապարհների ածխային կայսերները:

19-րդ դարի վերջում ամբողջ աշխարհն արդեն բաժանված էր իմպերիալիստական մեծ պետությունների միջի: Նոր յուկրամասների հետագա նվաճումը կառող էր տեղի ունենալ միայն մեծ պետությունների դեյտալ ընդհարման հետեանիքով: Գերմանիայի պարտությունը 1914-1918 թ. թ. պատերազմի ընթացքում պատճառ հանդիսացավ՝ զարութների նոր բաժանման և բրիտանական զարութային կայրությունն ելի ավելի ընդլայնվեց ի համար կայսերական գործիքի: Աֆրիկայում և Խաղաղ օվկիանոսում գտնվող ուրմանական գաղութների մեծադրույն մասը անցավ Անգլիային, իսկ Ասիայում՝ Անգլիան մերժուեց Պաղեստինի Անդրէորդանանի և Իրաքի մանդատները<sup>1)</sup>:

Այսպիսով բրիտանական իմպերիալիզմի ձեռքն ան-

<sup>1)</sup> Մանդատ—Աղդերի վրայի կողմից այս կամ իմպերիալիստական ցերկերին արվող իրավունքը գաղութները կաւալարելու վերաբերյալ:

շամպ արաբաբենակ համարյա ամբողջ տերժութիւնն : Անդլիացիներն այստեղ ել սկսեցին կիրառել իրենց փորձված քաղաքականությունը՝ զաշն կապելով նվաճակած յերկրների ֆեոդալ եկեմնենաների հետ : Իրաքում և Անդրէսրբանանում անդլիական զորքերի ողնությամբ գահ եյին բարձրացվում արաբական թազավորներ, վորոնք անդլիական իմպերիալիստների ձեռքում խաղաղիք եյին հանդիսանում : Պաղեստինում նրանք ցանկանում եյին ուժանդակություն ստանալ թե արաբական իուզոր հողատերերի և թե հրեական բուրժուազիայի կողմէ :

Այդ նոր գաղութներն Անդլիան ձեռք բերեց՝ Անդրիաշի, Հնդկաստանի, Ավստրալիայի, Կանադայի, Նոր Զելանդիայի և Հարավային Աֆրիկայի մեկ միլիոնից ու ելլի բանտորների և գյուղացիների կյանքի դնուի : Այս ուղղ պետք է ավելացնել հարյուր հազարավոր աՓրիկական նեգրերի և չինական կուլիների կյանքերը, վորոնք ստրկային վիճակում բանելով աշխատավորական բառավոններում<sup>2)</sup> մահացան զանազան հիվանդություններից և ուժասպառությունից : Թե այս ճանապարհով քանի մարդ վոչչչացավ, անհայտ ե, քանի-վոր նեղերին և չինացիներին աշխատավորական բառավոնները քողի իմպերիալիստական կառավարությունը չեր հետաքրքրում նրանց մարդ չհամարելով :

1914-18 թ. թ. իմպերիալիստական պատերազմի հետևանքով Անդլիան դարձավ աշխարհի ամենամեծ դաշտութային պետությունը, նրա գաղութներն իրենց մեծությամբ և նշանակությամբ անհամեմատ զերականցում են մյուս բոլոր պետությունների գաղութներին : Բայց մյուս կողմից՝ Անդլիայի արդյունաբերական և ֆինանսական ուսուրաները պատերազմից հետո

<sup>1)</sup> Աշխատավորական բառավոնները պատերազմի ընթացքում կատարում եյին ամենածանր աշխատանքներ՝ ճանապարհներ եյին կառուցում՝ խրամատներ եյին պատրաստում, բեռներ եյին կըսում և այլն :

չափաղանց նվազեցին և նրա հանդեպ դուրս յեկավ մի նոր զորեղ հակառակորդ՝ Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգները :

Բրիտանական իմպերիալիզմը պետք ե ուժնոր կերպով պաշտպանի իր զաղութային մօնոպոլիան Հյուսիսային Ամերիկայի վոտնաձգություններից : Ամերիկան չի բարձրացվում նրանով, վոր իրեն և պատկանում այսպիսի կիսադաղութների շահագործման առյուծի բաժինը, ինչպիսին Են Հարավային Ամերիկան և Չինաստանը : Միացյալ Նահանգներն, Անդլիայի որինակով, ձգտում են գաղութների մօնոպոլ շահագործմանը : Կապիտալիզմի խրանիկական ճգնաժամը, առևտրական շուկաների նվազումն ամբողջ աշխարհում այդ խնդիրն առաջին պլանն են մզում : Այդ բոլորն որ որի վրա աշխարհը մոռւցնում են մի նոր արյունահեղ պահանջի :

Կապիտալիստական յերկրների միջև սրվող հակառավությունների աճման, իմպերիալիստների կողմից աշխարհն իրենց մեջ բաժանելու առթիվ պատրաստվող սպանգի, գաղութների տիբապկության հետ միաժամանակ գաղութային յերկրներում աճում ու լայնանում և հեղափոխական շարժումը : Այդ շարժման մեջ ընդգրկվում են նոր ուժեղ, վորոնք յելնում են գաղութային չին շահագործման և իմպերիալիստական ստրկության գեմ : Մինչեւ համաշխարհային պատերազմը Բրիտանական կայսրության ահմաններում հեղափոխական շարժումը ավելի ուժեղ եր չնդկաստանում և Յեղիպատում : Նախկին ցարական Ռուսաստանում, պղութարական հեղափոխության հաղթանակի ազդեցության տակ, այդ շարժումը ավելի ու ավելի տարածվում և բոլոր զաղութային յերկրներում, վերածվելով զինյալ պայքարի ընդդեմ իմպերիալիզմի և նրա գաշնակից՝ բոլորակութայի բրոկի : Հնդկաստանում 1919 և 1920 թ. թ., Յեղիպատում՝ 1923-24 թ., Իրաքում՝ 1922 թ., Պաղեստինում և Աֆրիկայում՝ 1929 թ., և նորից Հնդկաստանում՝ 1930 թ. Բրիտանական իմպերիալիզմի զինյալ ուժեղի հետ տեղի ունեցան խոր

կոխիներ : Գաղութային ժառանքների հեղափոխական գիտակցության աճման և կազիտալիստական տվյալների անտեսական և հատկապես աղբարային ճնշումի հետ միասին, ավելի ծանրանում և իմպերիալիզմի լուծը դադության յերկրներում և ավելի անխնա ու դժուան են դահնում և անպեսիվ միջոցները : Մյուս կողմից պայքարը նրա գեմ վոչ թե նվազում, այլ աճում, լայնանում ու խորանում ե, պրոլետարիատի զեկավարության տակ, ընդդրկելով գյուղացիության և մանր բարժուակայի նոր հսկայական մասսաներ : Ավելի ակնհայտ ու պարզորոշ ե գառնում կոմունիստական ինտերնացիոնի զեկավար գերը, ավելի ուժեղ և զգացվում չոկտեմբերյան հեղափոխության և Խորհրդային Միության սոցիալիստական շինարարության նվաճումների հսկայական աղղեցությունը :

## ՀՆԴԿԱՍՏԱՆ

Անդրկակոն բոլոր գաղութների մեջ Հնդկաստանի 131.156.396 հոգի աղղարնակությամբ և 1.805.332 քառ. մղոն<sup>1)</sup> տարածությամբ անվիճելի կերպով գրավում և առաջին տեղը, նա ամբողջ Բրիտանական կայսրության սիստեմի առանցքն է կազմում և Բրիտանական քաղաքականության մեջ ունի վճռական նշանակություն : Հնդկաստանի ներմուծման ամբողջ գումարը 1926-27 թ. կազմում եր՝ 2.726.303.692 ռուպիա, վորից՝ 1.105.384.591 ռուպիա, այսինքն համարյա եթեսը, Անդրկայից : Արտահանումը նույն տարում կազմում եր՝ 3.114.491.122 ռուպիա, վորից 638.878.453 ռուպիա ընկնում, եր Անդրկային : Արտահանման գլխավոր տուրքականերն են՝ բամբակ, ջութ, հացահատիկային կուլուրաներ, յուղատու բույսերի սերմեր, թեյ, կաշի և զաղաների մորթիներ : Իսկ Հնդկաստանը ներմուծում և անդրկական ինդուստրիայի ամենաթանգարակ է արտադրանքությունը :

Նույնի, յերկաթուղթին առաջավորությամ, ավտոմատիկիներ, քիմիական և թղթի արդյունաբերության արտադրանքներ :

Սակայն Հնդկաստանն Անգլիայ յե արտահանում վոչ միայն գյուղատնտեսական մթերքներ և արդյունաբերական հումուրիք . ամեն տարի այստեղից արտահանվում են հսկայական գումարներ, վորպես Հնդկաստանի «գարցացման» առթիվ անթիվ վոխառությունների համար անգիտական ֆինանսական կապիտալին տրվող առկոմներ, վորպես ազմինիստրացիային և զարնիգոններ արվելիք ոսօնիկ, և կամ վորպես անդլիական բանակի սպաներին տրվող կենսաթոշակներ և արձակուրդային հատուցումներ և այն : Այս ճանապարհներով արտահանված գրամների ճիշտ գումարը գժվար և վորոշել : 19-րդ դարի 90-ական թվականներին անգիտական պետական գործիների հաշվով, այդ գումարները տարեկան կազմում եյին մոտ 15 միլիոն ֆունտ ստերլինգ<sup>1)</sup> : Ներկայումս այդ գումարը կազմում է տարեկան առնը վաղն 35 միլիոն ֆունտ ստերլինգ : Մրանք են ահա տուրեկան տյի հարկերը, վոր Հնդկաստանը վճարում ե բրիտանական իմպերիալիզմին : Հարկերի ամենաուժը ցույց ե տալիս, վոր իմպերիալիզմի եալիսայի ընթացքում, Հնդկաստանի կախումն Անդրկայից ուժեղացել է, չնայած այն առյերևության քաղաքական ուժքորմներին, «Որենսգրական ժողովներին», վորպիսին ստացել է Հնդկաստանը :

Զետկան տեսակետից Անդրկայի անմիջական տիրապետության տակ ե գտնվում վոչ ամբողջ Հնդկաստանը : Հնդկաստանի ամբողջ տարածությունից, վոր հաղասար և 1.805.332 քառ. մղոնի, 711 հաղար քառ. մղոնը կազմում և Փեղողալ իշխանների կողմից կառավարվող անրիտորիան, իշխանների, վորոնք հանդիսանում են Բրիտանական կայսրության «հարկատուններ» : Այդ այսպիս կոչվող շահնշական պետությունները ունեն 72

<sup>1)</sup> Ֆունտ ստերլինգը հավասար է 9 ռ. 48 կ.

<sup>1)</sup> Մզանել, մի կառմեաց

միլիոնից ավելի աղջաբնակություն։ (Ամբողջ Հնդկաստանի աղջաբնակության թիվը 300 միլիոնից ավելի յէ)։ Տեղական պետությունների մեջ գոյություն չունի զրեթև և վոչ մի ինդուստրիա, իսկ գյուղացիական մասաներն այսուեղ շահագործվում են այնպիսի գաղանային դաշտանությամբ, ինչպես միջին դարերում։ Գյուղացիներից անխցառին միջոցներ են քամվում իշխանների հակայական ծախսեր պահանջող պալատների, տեղական պետությունների զորքի պահպանման և Բրիտանիան կառավարության տարեկան հարկերը վճարելու համար։ Տեղական ֆեոդալ իշխանները, վորոնք հանդիսանում են Սնդիմայի ամենավատահելի հենարանը Հնդկաստանի տիրապետության դործում, վայելում են սնդիմական դեկապար բյուրոկրատիայի անդավաճան բաշեհամ փերաբերմունքը։

Հնդկայական կառավարությունը՝ վորի թիվում և քրանվորական» կառավարության վարչապետ Մահանալի, միշտ եւ մեծ սիրալիբությամբ են դիմավորում լորպես ցանկալի հյուր, Լոնդոն յեկող հնդկայական իշխաններին։

Հնդկաստանի 320 միլիոն աղջաբնակությունից՝ մոտ 240 միլիոնը զբաղվում են դյուղատնակություն։ Դյուղացիության այլ հսկայական մասան ապրում և աշխատում են սարսափելի աղջապատճեն և գաղանային շահագործման պայմաններում։ Մի քանի նահանգներում՝ Ռուկ, Բենդալիա և Միացյալ պրովինցիաների մի մասում, անդիմացիներն արհեստական կերպով ստեղծեցին տեղական կարվածատերերի-զեմինդարների դասակարգը։ Իրենք զեմինդարները դրեթե յերբեք չեն զբաղվում հողագործությամբ։ Սովորաբար զեմինդարի և նրա հոգր մշակող գյուղացու միջև գոյություն ունի սասարից վակաս յենթավարձականներ։ Նրանցից յուշաբանչուրը, բնականաբար, իր ոռտին եւ վերցնում գյուղացու աշխատանքի արդյունքից վորոշ մասը, իսկ նրանց բոլորի գլխին կանդնած են կառավարությունը, վորը հարկերի անվան տակ, գոփում եւ գյուղացու ընդ-

հանուր յեկամտի ավելի քան 20 տոկ։։ Հնդկաստանի մյուս մասերում գերակշռում են հողային վարձակալության յերկու տեսակները։ Նրանցից ամենատարածվածը լիազոր բիատվարի ե, այսինքն՝ գյուղացին հողն անմիջապես վարձով և վերցնում կառավարությունից և հարկն ել անմիջականորեն վճարում ե հարկահավաք պաշտոնյային։ Վարձակալության մյուս ձևն ե, այսպիս կոչվող, «Համայնական» վարձակալությունը, յերբ ամբողջ զյուղը պատասխանատու յե վարձավճարի և հարկերի համար կառավարության առաջ։ Վարձակալության այդ յերեք ձևն ել, հատկապես ըիատվարին՝ զյուղացիներին հարավորություն չեն տալիս աղատվելու վաշխառուների պարտքերից։

Վաշխառվից կախում ունի վոչ միայն գյուղացին, վորին նա գբալ ե զնում իր բերքը, վորպեսդի պետությանը վնարի իր հարկերը, այլև գյուղական արհեստավորը։ Վերջինս քայլայվել ե զործարանային արտադրության ավելի եժան ապրանքների մրցումից և ստիգմած ե պարտք վերցնել, վորպեսդի հնարավորություն անհնա զբաղվելու իր արհեստով։ Յեթե նա թողնի արհեստը՝ կղատապարտովի սովամահության։ Գյուղերում բնդ հանրապես չկան աղատ հողեր, վորպեսդի նա կարողանա մշակել, իսկ այստեղ-այնտեղ յեղած պետական անհնան քանակով հողային տարածությունները տարեց-տարի փոքրանում են։ Յելքոպայում գործարանային արդյունաբերությունն իր ժամանակին կլանեց քայլայլած արհեստավորին, սպիայն Հնդկաստանում արդյունաբերությունը թույլ զարգացած լինելու հետևանքով՝ կարող ե աշխատանք տալ աղջաբնակության միայն չնչին մատին։ Քիչ չեն այն ըեպքերը, վոր հնդիկ գյուղացին և արհեստավորը իրենց պարտքերը վճարելու վոփարեն, դառնում են իրենց պարտատերերի սորուկը։ Նման պարտապան-ստրուկտորի ճիշտ թիվը հայտնի չե, սպիայն նա բավական մեծ ե։

Այն պարտքերը, վորոնք գյուղացիները յերբեք չեն

կորող վճարիլ, ինչպես և գյուղական արհեստավորման քայլքայման պրոցեսը պատճառ հանդիսացան գյուղական հողամասերի փոքրացմանը: Բոմբեյի նաև հանդում, վորտեղ գյուղական հողամասպործման տեղի ձեւը բիուստավորին և, 48 տոկոսը, այսինքն գյուղական վարձական հողամասերի հմարյաշ թե կեսը, յուրաքանչյուր հողամաս հինգ ակրից (2 հետար) ամեն չի, իսկ հողամասերի 88 %-ը 25 ակրից (10 հետար) պահաս ե: Փենաջում ամբողջ ցանքի տարածության մի քառորդ մասը գտնվում է բոլոր վարձականների 3.7 % ձեռքում, իսկ աղդաբնակության 60 % վարձում են այնպիսի հողամասեր, վորոնցից յուրաքանչյուրը 5 ակրից ավել չե: Նման պայմանների հետևանքով արագանում և ազգաբնակության լիակատար սղագուացման պրոցեսը և հոկտյական մասսաներ ներկայում կանգնած են իսկական քաղցի և վոչնչացման ռահմանում: Կոռուպտարության հաշվետվությունը Բնեղականի աղդաբնակության առողջապահական դրության մասին առ 1927 թ. ստիպված է յեղել խոստովանել, վոր «Բնեղականի գյուղացիությունն այնքան վատ և սնկում, վոր աշնետներն անդամ նման սնունդ ստանալ, հինգ շաբաթից ավելի չելին կարող ասլրել»:

Աղդաբնակությունը սարսափելի կերպով ուժասպառ և յազել և բոլորովին չի կարողանում տանել վորեւ ինքնիցին (վարակում): Այսպես, անցյալ տարի 120 հազար մարդ մահացան իուլիսայից, 250 հազար՝ չերսից, 350 հազար՝ թոքախտից և 100 հազար՝ աղեքային հիվանդություններից: Միաժամանակ հողադուրի գյուղացին կամ անտություններից: Հնդկացին ամբողջությամբ անդամ անտառում ցախ ժողովել:

Հնդկացանի ամբողջ ակրիտորիայի 20 տոկոսը հանդիմած ևն պիտությանը պատկանող անտառներով, որ գյուղացիների մուտքը խստիվ արդելվուծ ե: Նրանց չի թույլատրվում անդամ անտառում ցախ ժողովել կամ անտառներ աւ անդանել: Այդպիսով գյուղացիներ

ըստ վոչ մի առջեց հնարավորություն չունեն իրենց կարգների համար վայր ստանալու և նրանք՝ վորովեռ վասելսայութ, գործ են ածում չորացրած աղբ, վորով վրկում են իրենց գաշաները պարաբտացումից: Աշխատանքն անտառներում բարիս բուն իմաստով, հարկադրական է, քանի վոր կառավարական անտառապարեսներն իրավունքը ունեն ոգտագործելու գյուղացիների աշխատանքը և գյուղացիները պարաբտավոր են կատարել նրանց բուրը պահանջները: Վորպես վարձատրություն գյուղացիներին, իրենց աշխատանքի փոխարեն, թույլատրությունը և անտառում ցախ օրդովնել այն ել շատ սահմանափակ քանակով և արվում են անսառուններին անտառում արածացնելու վորոշ իրավունքներ: Հնդկաստանի անտառները կառավարությանը տարեկան բերում են 25 միլիոն ոռության մաքուր յեկամուտ, ավելի շատ, քան կանադայի և Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների պետական հսկայական անտառային տնտեսությունները:

Հնդկական պրոլետարիատի գրությունը վոքքը ինչ ամենի լավ ե, քան գյուղացիության դրությունը: Մինչաւ վաստակը, վորով վեց հոգուց բազկացած ընտանիքը կարող ե եր զոյությունը պահպանել, սնվելով ցորեն հայրի փոխարեն կորեկով՝ որական մի ոռության յե: Ինքնին հասկանալի յե, վոր այդ գումարից վոչինչ չի մնում վոչ հագուստի, վոչ բնակարանավարձի, վոչ բժշկության կամ գյուղ մեկնելու ճանապարհածախսի և վոչ ել վորեւ զվարձության համար: Հնդկաստանում զոյություն չունի ամբողջ յերկրի համար աշխատավարձի միատեսակ նորմա: Մանվածային գործարանների բանվորությունը Բենգալիայում ամսական ստանում են 9-ից մինչեւ 30 ոռությա, Բոմբեյում՝ 13-ից մինչեւ 34 ոռությա, իսկ Բոմբեյից վոչ հեռագույղ Անդեկտագում՝ 12-ից մինչեւ 30 ոռությա: Միայն այն դեպքում, յերբ աշխատում են ընտանիքի բոլոր անդամները՝ հայրը, մայրը, զավակները, նրանց կարող են վաստակել մի գումար, վորը մասավորապես

կարող ե ապրուստի միջոցի մինիմումը կազմել։ Դրան  
պետք ե ավելացնել և այն, վոր աշխատավարձը շատ  
հաճախ բանվորներին վճարում են 1½—2 ամիս ուշ  
և մշտական կաշուռները, վոր տրվում են՝ նոր բան-  
վորներ հավաքող տասնապետներին։ Բացի դրանից,  
բանվորների անշան աշխատավարձից ձեռնարկում շատ  
հաճախ «ուշացման», «վատ» աշխատանքի համար և  
այլն, տուրքանքային հանուրդներ են կատարում։ Ինա-  
վորները ստիպված են իրենց անհրաժեշտ մթերքները  
զնել զործարանատիրոջը պատկանող խանութներից, մի  
խոռոչով, ամեն ինչ այնպես ե գասավորված, վոր բան-  
վորի փանտացի աշխատավարձը համարյա արողակներին  
վերադառնում և ձեռնարկատիրոջ գրպանը։

Քաղաքներում բարդավաճում են վայսառուները,  
վորոնք հսկայական հարստություն են դիզում ի հա-  
շվի բանվորների թշվառության։ Վաշխառուները զոր-  
ծելով կոնտակտ կերպով ձեռնարկատերների հետ՝ մի-  
ացյալ ջանքերով շահագործում են բանվորներին մինչ  
ծայրահեղություն։ Բանվորական որը տեսում է 10-ից  
